176. Ի մոկից հարաւոյ Գանձասարայ կայ անուանի աւանն ԱՄԱՐԱՍ 'ի Հաբանդ գաւառի Արցախոյ, ուր նախ Լուսաւորիչն հիմն արկ եկեղեցւոյ և Գրիգորիս մեծաշէն կանգնեաց զայն. և ինքն անդ հանգուցաւ առ նշխարաց սրբոցն Զաքարիայ և Պանդալեւանի՝ զորս բերեալն էր 'ի Հայոց. և առ Վաչագանաւ յայտնեցան նշխարքն այն և իւրքն. և աթոռ եպիսկոպոսի հաստատեցաւ անդ, ուր նստան երբեմն և կաթուղիկոսք. յԹ դարու 'ի Պարսից աւերեցաւ, և յելս ԺԳ-ի գաւառանն Գրիգորիսի բարձաւ անտի և առաքեցաւ 'ի Կոստանդնուպօլիս. առ մեօք Նորոգեցաւ հին եկեղեցին 'ի մեջք Շահնազարայ: — Միւս ևս անուանի ուխտ կայ սակաւուք հեռի 'ի Գանձասարայ յաջմէ Խաչենոյ Ս. Յակոբ վանք, որ է Մեծիրանոյ վանքն, յելից Գըոտ-կէօղ լերին, յանուն Մծբնացւոյն, որոյ և աջ պահի 'ի սմա. կանգուն կան երեք եկեղեցիք Նորոգեալք յամին 1691, այլ հնոյն թուի կանգնեալ 'ի կէս Ի դարու. իսկ եպիսկոպոս Մեծիրանից յիշի 'ի Զ դարէ. չէն է մենաստանս այս և նոր նորոգեալ առ մեօք: Հանդէպ վանացս ամբառնայ Հաւախաղոյ բերդ 'ի վիմի բարձու, Սոգոլան-գալէ-ի կոչեցեալ այժմ. զոր առեալ թաթարաց ՅԺԳ դարու՝ կոտորեցին անգթութեամբ զապաւինեալսն 'ի նա: — Ի հարաւոյ խաչէն գեղոյ կան գեօղքս Տալալը, Կիւլեպոխ, Բաբոխ, և Շահպուլախ աւան 'ի վերայ արքունի ճանապարհին Գանձակայ և Շուշւոյ, ուր Նասրը շահ կառոյց ամրոց, և Փանախան յաւել շինուածս. առ երի ամբառնայ լեառն բուսաբեր և աղբերք 'ի նմա՝ որմնե աղք 'ի Նասրըշահէ. և 'ի գագաթանն հայ եկեղեցեաց մնացուածք, յորոց մինս այս ունի թուական ՉԺԲ (1263) և խաչարձան կանգնեալ 'ի Շահանշահէ որդւոյ Աշոտոյ. յորոց երևի նշանաւոր տեղի լինել 'ի հնումն, և կարծի ՏԻԳՐԱՆԱԳԵՐՏՆ կամ ՏԳՐԱՆԱՎԵՐԳ աւան: — Ի ստորև 'ի վերայ ճանապարհին կայ Աւէրան աւան յեղը Գարգարայ և ամրոց հզօր կառուցեալ 'ի Փանա-խանէ: Ի մոկից նորա կայ Մէխգոս-էնգ գեօղ, 'ի հարաւոյ Խանէնգ, Խալիֆալը մերձ 'ի Շուշի: — Առ ափամբք Թարթառայ՝ որ է Տրտու կամ Տրտուական գետ՝ դադարեաց առ վայր մի Ս. Մեսրովբ և յերկարագոյնս աշակերտք նորա, կէսք 'ի հիւսիսոյ կողմանէ 'ի Մեծկունեաց գաւառի մերձ ՅԱԿՈՆԱ քաղաք, 'ի մայրեւոր մենարանս, ուր և նահատակեցանն 'ի զօրացն Հոնաց, հանդերձ թագուհեաւ Ուտիացի տիկնաւ, որոց մարմինք և հանդերձք սփռեալ ընդ բլուրն՝ 'ի գիշերի աստեղափայլ ծագեցան, վասն որոյ կոչեցաւ տեղին Աստղ-բլուր. յորմէ սքանչացեալ զօրավարին Հոնաց՝ հաւատաց 'ի Քրիստոս և մկրտեցաւ իւրովքն, և 'ի նմին տեղւոջ կատարեցաւ նահատակութեամբ յիւրոյ թագաւորէն, որպէս և որդիք նորա 'ի Դիզափայտ լերին (178): Իսկ կէսք յաշակերտացն դադարեցին 'ի հարաւոյ Տրտուայ 'ի Զղոխ կոչեցեալ հովտի՝ գետակի համանուան ընդ մէջ անցանելով, 'ի ԹՈՍԱՍՏԱԿ գաւառի միջատահման ընդ Մեծ-Կողմանս և Մեծ-Իրանս, և անդ թաքուցին զնշխարս սուրբս՝ զոր յԵրուսաղեմայ բերեալ էին, յահէ ասպատակին հիւսիսոյ. և յետ ժամանակաց յայտնեցան նշխարքն և մարմինք նոցա յաւուրս Զուանշերի տեառն Աղուանից յԺԷ դարու:

177. ՇՈՒՇԻ կամ ՇՈՒՇԱ քաղաք յարևելեան հարաւային սահմանածայր գաւառին կայ, յահեկէ Գարգարայ, 'ի սարահարթի բարձու 4000', յանմատոյց վայրի, ամրացեալ և աշտարակք և պարսպք. զոր կառոյց Փանա խան Թուրքման յամին 1789, փոխեալ այսր զաթոռ իւր 'ի Շահպուլաքէ, նուաճելով զԳարապաղ, և կոչեաց զբերդն յիւր անուն Փանապատ. այլ 'ի փոխադրիլ այսր բնակչաց մերձակայ Շուշի գեղջ, զայս անուն ընկալաւ. առ որդւով նորա Իպրահիմաւ՝ շահն Պարսից երիցս պաշարեալ՝ ուր ուրեմն էառ զքաղաքն և բաղում նախճիրս գործեաց. յամին 1805 Իպրահիմ եմուտ ընդ պաշտպանութեամբ Ռուսաց. այլ 'ի կամել նորա վտարանջեալ, և յետ նորա՝ որդւոյ իւրոյ, զրկեցան յիշխանութենէ և յամին 1822 Շուշի և Գարապաղ մարզ կացին Ռուսաց: Քաղաքն ամուր է այլ գծուծ տեսլեամբ և անձուկ և ջրապակաս. ջոլք եկեղեցիք են Հայոց գաղթականաց Ագուլեցեաց և Ղազանճեցոց, և տպագրատուն, և առաջնորդարան յաջորդի աթոռոյն Աղուանից, որոյ թեմք են Գարապաղ և Շիրուան: Զուարճալի են սահմանք քաղաքին անտառախիտք և ապառաժք, որպէս և քաղաքին տեսարան է 'ի վերայ գաշտին Աղուանից և լերանց Կովկասայ և Արցախոյ: Բնակիչք 7,000, Հայ և թաթար:

178. Դ. ՎԱՌԱՆԴԻՆ գաւառ յերից կողմանց ունի զգետսն Գարգար, Հաքարի և ՂԵրասխ, և յելից զդաշտն Աղուանից կամ ՁԲԷպէրլին գաւառ. հիւսիսակողմն և արևմտեանն լեռնախիտ որպէս ըզՁլբերդ, դաշտանայ ըստ հարաւոյ և ըստ արևելից.



Vieille Eglise près de Schouscha.